

ԱՐՁԱԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՍՐԲՈՒՅԻ

ԼԱԿ.

415

~~417~~

750



891.542-3

թ-88

450

ԱՐՇԱԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ

# Ս Ր Բ Ո Ւ Հ Ի

1010



Արտատպած „ԱՐՁԱՑԱՆՔ“ լրագրից.

1894

144

415


48

Հրատ. հիմ. Մկրտիչ Կարապետեանի.

ԱՐՇԱԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ս Ր Բ Ո Ւ Ն Ի

1010  
4082/1  
711



ՄՈՍԿՈՒՍ.

Տ Պ Ա Ր Ա Ն Գ. Բ Ա Ր Թ Ո Ւ Դ Ա Ր Ե Ա Ն Ի.

1894

(71)

Մ. Կարապետյան  
Հայաստանի  
Հանրապետության  
ԳԿԻ Զուգորդություն  
Մ. Կարապետյան



2403

2 000

ԲԱՐՉՐԵՊԵՏԻԻ

Հ Ա Յ Ր Խ Ո Ր Է Ն

ԾԵՅՐԵԳՈՅՆ ՎԱՐԿԵՊԵՏ

Ս Տ Ե Փ Ա Ն Է Ի Ն

ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆՔՈՎ

Ն Ո Ի Ի Ր Ո Ի Մ Է

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ը

Дозволено цензурою. С.-Петербургъ. 13 Апр. 1894 г.

Типогр. Х. Бархударянъ Моск. Масницк. д Ермаков.



29-414

415-2004

## Ս Բ Բ Ո Ւ Հ Ի .

I.



Ընդարդ Մասիսի  
ստորոտում ընկած  
էր մի հոյակապ ա-  
պարանք, որ գարե-  
րից է վեր մնացել  
էր անխախտ և ան-  
պարտ հսկայի պէս  
անընկճուն:

Ապարանքի վեհապանձ գմբէթ-  
ները փայլում էին ոսկեվառ արևի  
մշտառև ճառագայթների հետ:



Երկնային թռչուններն էին միայն  
կարողանում մտենալ նրան, հան-  
գիստ առնել պանծալի կատարներին  
և հնչեցնել իրանց դայլայլիկները:  
Կենսատու հովերն էին միայն անու-  
շիկ վզզոցով գուրգուրում ու փայ-  
փայում նրան:

Կնդրուկի անուշ ծուխը ապարան-  
քի հերթիկներից անսպառ հոսում  
էր և անարատ մոմերը անաղօտ լոյ-  
սով ամեն ժամ լուսաւորում նրա  
ներքը:

Սյդտեղ, այդ հրաշակերտ ապա-  
րանքումն էր ապրում Սրբուհին:

Ձքնաղ էր Սրբուհին, չքնաղ ինչ-  
պէս երկնատիպ հրեշտակ: Հրացայտ  
աչերից ցուլացնող ժպիտը վկայում  
էր նրա սրտի վեհութիւնը:



Երկնային թռչուններն էին միայն կարողանում  
մտենալ նրան:

Տենչանքների ծով էր նրա սիրտը,  
գեղուած անհամար յոյսերով, ան-  
նկարագրելի սիրով և անյողգողդ  
հաւատով:

Սրբուհին, այդ գերբնական արա-  
րածը բիւրաւոր ցնորքների առար-  
կան է դարձած և բազմաթիւ ըմ-  
բոստների կռուածաղիկն է եղած:  
Այդ իսկ պատճառով նա ստիպուած  
էր մաքառել հազարաւոր տառա-  
պանքների դէմ:

Փրկչի անմահ խօսքերին յենուած,  
վառուած ամուր հաւատով, թիկն  
է տուել Մասիսի լեռկ ժայռերին,  
քաջարի ոյժով մարտնչել ամեն տե-  
սակ լպիրշների դէմ և միշտ իւր  
յաղթանակի գրօջը ծածանել:

Սրեւժպիտ դէմքը ժպտել է միշտ  
արևի պայծառ ճառագայթների

հետ, ոսկեղօծ սլաքները շանթել է  
միշտ դէպի արևմուտք, իսաչի շո-  
ղուն ստուերը ձգել է ամենուրեք,  
Տիրոջ տուած գոհարները սփռել  
ամեն տեղ: Անբաղդ Սրբուհու ցա-  
նած սերմերի պտուղը ուրիշն է վա-  
յելել և իւր տենչանքները միշտ  
կաշկանդուել են սրտի վշտալեց խոր-  
քերում:

Անկեղծ զգացմունքներով բարա-  
խող մի կուրծք էր փնտրում Սրբ-  
բուհին յոգնած գլուխը հանգչեցնե-  
լու, բայց չէր գտնում:





Չքնաղ էր Սրբուհին, չքնաղ՝  
ինչպէս երկնատիպ հրեշտակ:



II.

արնանային չըք-  
նաղ օրերից մէկն  
էր: Բնութիւնը  
իւր հրաշալիքները թափել էր Սըր-  
բուհու ապարանքի շուրջը: Յնձուժ

էր Մասիսը գեղածիծաղ ծաղկանց  
մէջ: Ոլոր մոլոր քայլերով, թաւշեայ  
ափերը քերելով, վշալով փշալով  
ծով էր շտապում Սրաքսը:

Խնդում են բնութեան համայն  
տարերքը:

Սրբուհին էր միայն, որ չէր մաս-  
նակցում բնութեան ցնծութիւննե-  
րին:

Առանձնացած իւր վշտերի հետ,  
մտել էր ապարանք: Կաթ կաթ գո-  
հարներ էր գլորում սեւթոյր, վառ-  
ուող աչերից և ոռոգում դալուկ  
այտերը:

Սյդ ժամանակ Սրբուհին լսեց  
գրսից մարդկանց ոգևորուած ձայ-  
ներ, անվերջ գովգոյներ, որ թափ-  
ւում էր մէկի գլխին:

Ո՞վ է այդ, մտածեց նա, բացաւ  
ապարանքի դռները և դուրս եկաւ  
տեսնելու նրան:

Նա տեսաւ մի պարթև երիտա-  
սարդ, արծուի հայեացքով, իշխա-  
նական սարասով, Մասիսն իրան նե-  
ցուկ առած, արծուագունդ գաւա-  
զանը սատար: Խօսում է սիրոյ կայ-  
ծերով վառուած, գրուատում է իւր  
անցած, գնացած որերոյն սիրագոր-  
ծութիւնները, մէկ հայեացքն առ-  
նում է Մասիս, մէկ Սրբուհու ապա-  
րանքը, գէղջան աղբիւրի նման հան-  
գիստ, դադար չզգալով, ադամանդ,  
գոհար էր թափում բերանից: Փայլ,  
յաւէրժական փայլ էր գոչում այդ  
վեհապանծ ապարանքի համար:

Սրբուհին ապշել էր: Նրա դիւ-  
թիչ աչքերը, երկնախօս լեզուն



միանգամայն գերեցին նրան. Թեթև  
ցնցուեց նա, շրթունքները մեղմիկ  
դողացին և այդ ալախօսիկ անձանօ-  
թին նետեց իւր խղճալի հայեացքը  
և դորանով ամեն՝ ինչ որ կար իւր  
սրտում թաղուած հասկացրեց նը-  
րան. Բայց նա թողեց ոգևորուած  
ամբոխը, թողեց խօսկանին, անցաւ  
և մտաւ ապարանք:

Բիւրաւոր մտքեր, հազարաւոր ցը-  
նորքներ, հազարերանգ պատկերնե-  
րի նման իրար ետևից գնում գալիս  
էին Սրբուհու աչքերի առաջ, խը-  
լում նրա ուշքն ու մտքը, յուզում,  
վրդովվում տենչավառ սիրտը:

Եւ այդ ծանր վարանման մէջ  
յանկարծ նրա դուռը մեղմիկ բաղ-  
խեցին.

— Ո՞վ ես, ձայն տուեց Սրբուհին:

— Ես, բացէք այս ողորմութեան  
դուռը:

«Ողորմութեան դուռը», կրկնեց  
ինքն իրան Սրբուհին, ճանաչեց թո-  
վիչ ձայնը և իսկոյն դուռը բաց  
արեց:

Ներս մտաւ անձանօթը, խոր գը-  
լուխ խոնարհեցրեց Սրբուհու առաջ,  
աչերն առաւ դէպի լուիկ կամարները  
և երկու վառ գոհարներ զլորեց ա-  
չերից ու թաթախեց սև սաթագոյն  
մօրուսը:

Մօտեցաւ Սրբուհին նրան, հան-  
դարտ բռնեց նրա ձեռքը և զողո-  
ջուն ձայնով հարցրեց նրա անունը:  
— Ինձ կոչում են «Արծիւ»:

— Արծիւ, հիանալի է այդ անու-  
նը. ողբան յարմարութիւն քո ար-  
ծուի հայեացքին. բայց դու ունի՞ս

արդեօք և արծուի սիրտ, արծուի  
ոգի, հարցրեց խաղաղ ձայնով հը-  
րեշտականման Սրբուհին:

— Ես ոչինչ չեմ կարող ասել,  
բայց իմ ցնորքները—արծուի են.  
մտածում եմ արծուի պէս սլանալ  
դէպի վեր, դէպի եթեր, նստել Մա-  
սիսի գլխին և այնտեղից մի մի կա-  
թիլ ջուր սրսկել իմ բերաւոր եղ-  
բայրների պապականած սրտերին,  
այնտեղից ողջունել արևը, այնտեղից  
էլ հրաժեշտ տալ:

— Արևը, խօսեց Սրբուհին, բոլոր-  
ինն ժպտում է հաւասար. նրա շո-  
ղերը վայելում են և աւազակները  
և ամբարիշտները և ճշմարտասէր-  
ները և սուրբ սրտի տէրերը, ես  
հետևեցի նրան, ես նոյն ձևով սի-  
րեցի ամենքին, բայց աւանդ իմ վի-

ճակն այլ էր, իմ ճակատագիրը շատ  
անողբ էր և արդ՝ ես ստիպուած եմ  
տխուր և թախծալի անցնել իմ  
օրերը, մնալում եմ կարօտով, տանջ-  
վում եմ բիւրաւոր բաղձանքներով.  
այժմ ասա ինձ, պատուական Արծիւ,  
գու որ խօսում ես երկնային կրա-  
կով վառուած, գու որ կրակի պէս  
էլ ջերմացնում ես սառուցեալներին,  
գու կարող ես ասել. կտեսնե՞մ  
արդեօք իմ կեանքի անիւր իւր պը-  
տոյաները վոխած, կրտեսնեմ նրան  
սահելիս դէպ այնտեղ, ուր նետել  
եմ իմ բոլոր յոյսերի ու տենչանք-  
ների խարխուլը, ու շանթել իմ սի-  
րոյ սլաքը. ուր սպասում եմ իմ  
աստղի ազատ ծագելուն, ուր...

Արծիւը գլուխը կորացրեց, հրաշա-  
լի էր նա այդ դիրքում, հրաշակերտ

Սրբուհի.

1920 / 4082 / 45-2004 1002-514





մի արձան էր նա, որ ներկայացնում էր կատարեալ արժիւ իւր վեհ և պանծալի սարասով:

Փոքր ինչ մտածելուց շարժեց գլուխը և հանդարտ ձայնով ասաց Սրբուհուն:

— Մի՛ լար, Սրբուհի, քո կանգնած կոթողը յաւիտեան անկործան է, մի՛ լուանար դու նրան արտասուքով. այս սուրբ կամարների տակ դեռ զօղանջում են քո մեծ հայրերի անմահ անունները, դու ոգին ես նրանց, որ միշտ անպարտ կմնաս, արտասուքը թափում է սրտի վեշտը, բայց քո արտասուքը վերք է լուանում, բաւական է այդ վերքերով հեծեծենք, դու յենուիր այս վեհ ապարանքի փառքին, դու գգուիր Մասիսը. այս վայրերը սուրբ են,

այստեղ է համայն մարդկութեան որրանը, այստեղ ծնուեցին, այստեղ աճեցին, այստեղից հեռացան և դարձեալ այստեղ կըգան. մի՛ տըխրիր արևի ճառագայթները սարերի ետևն անցնելիս, մի՛ տրտմիր թանձր խաւարը պատելիս, գիշերուան ցերեկ է յաջորդում, խաւարին՝ լոյս, արևմտեան սարերի ետև անցած ճառագայթները կրկին արևելք կանցնին, արևելքում կըփայլի, քո լուսաստղը կըծագի անշուշտ, փոթորիկը կանցնի, մնայլ ամպերը կանհետանան, երկնակամարը քեզ նոր ծիածան կըկապէ այն ժամանակ և քո յոյսերի ձգած խարխալը այնողդողդ կըպահէ գոռ ալիքների դէմ մաքառող նաւը, կըծածանի առագաստը և կայմերը փրկութեան ողջոյն

կրտան քեզ... Ճակատս տուած եմ  
արևին, շլինքս խոնարհեցրած ծանր  
բեռների, կայլակ-կայլակ, քրտինք  
կըթափիմ և կըյուսամ որ քրք-  
տինքից աճին կըբուսնի, կըծաղկի  
և պտուղ կըտայ: Արդ՝ դու մի լար:

—Օ՛, այդ քո խօսքերը, թանկա-  
գին Արծիւ, սլացնում են ինձ դէպի  
հեռու, հեռու անցեալներ, բորբո-  
քում են սրտիս մէջ զեղուած հաղա-  
բաւոր իդձեր...

Եւ Արբուհին մեկնում է իւր  
ձեռքը:

Արծիւը նայեց Արբուհուն, առաւ  
նրա ձեռքը, չորեկ և ջերմ շրթունք-  
ները սեղմեց վերան:

—Ահա, այս խաչը, ասաց Արբ-  
բուհին, որ կախուած է իմ պարա-  
նոցով, որ մնացել է իբրև վերջին

յիշատակ պանծալի նախորդներիս,  
կախում եմ քո պարանոցով, խոս-  
տացիր, որ ամեն ճիգ թափելով կը  
տանես այդ:

—Խոստանում եմ:

—Խոստացիր, որ յաւիտեան նոյն  
սիրով վառուած կըլինիս դէպ ինձ,  
ինչպէս որ այժմ եմ տեսնում:

—Խոստանում եմ:

—Խոստացիր, որ այդ շալակած  
կանցնիս ամեն առապարներ, կանց-  
նիս փշոտ, տատասկոտ ձորեր և եր-  
բէք տրտունջ ու ձանձրոյթ չես  
յայտնիլ:

—Խոստանում եմ:

—Խոստացիր, որ դորան միշտ կը  
լուանաս ճակատից քրտինքով:

—Խոստանում եմ:

—Եւ միշտ կը ջանաս գալ ինձ մօտ:





— Խոստանում եմ:

— Երբուիր այդ բոլոր խոստում-  
ներիդ մէջ:

— Երդվում եմ իմ կեանքով ու  
արևով, երդվում եմ Մեծն Քրիստոսի  
և սուրբն Վարդանայ անուններով:

— Համբուրիր խաչը:

Արծիւք սեղմում է խաչը շըր-  
թունքներին:

Սրբուհին խաչը կախում է նրա  
պարանոցով, համբուրում նրա ճա-  
կատը, հայեացքն առնում դէպի  
երկինք, աղօթք մրմնջում և ապա  
դառնում Արծուին, իսկ ես խոստա-  
նում եմ միշտ քեզ սիրելու կըլծող-  
նեմ քեզ, բայց միշտ ծնկաչոք կա-  
ղօթեմ առ երկինք, որ մի օր քեզ  
դարձեալ տեսնեմ այստեղ, բազմած

իմ գահի վերայ, գլուխ անցած այս  
ապարանքին:

Եւ այդ միջոցին ի՞նչ հրաշք:  
Ապարանքի կամարներից լսուեց ոգե-  
շունչ երգեցողութիւն, որ երգում  
էր «Խաչի քո Քրիստոս երկրպագա-  
նեմք»: Սրբուհին հայեացքն առ-  
նում է այնտեղ: Սպիտակափառ  
հրեշտակներին տեսնում է բազմած  
ծաղկների մէջ, ձեռներին վառ-  
վառն ճրագներ, և ծաղկահիւս մի  
պսակ կախած ուղղակի Արծուի գըլ-  
խի վերև: Չորում է և ինքը ու  
փառաբանում Աստծուն:

Արծիւն այդ տեսիլքից յուզուած,  
ընկնում է երեսի վերայ երկրպա-  
գութիւն մատուցանում երկնային  
Տիրոջ և կրկին Սրբուհու աջը համ-  
բուրում, կրկին յիշում իւր բոլոր

խոստումները և գլուխ խոնարհեցնելով  
հրաժեշտ տալիս նրան:

Տրտում և արտասուլաթոր, իսաչը  
պարանոցն առած, Արժիւը թողեց  
Սրբուհուն և հեռացաւ:



Իսաչը պարանոցն առած, Արժիւը  
թողեց Սրբուհուն և հեռացաւ:



III.



րերն իրար ետևից  
անցնում էին, անց-  
նում էին և տա-  
րիները, սակայն  
Արծիւը չէր երե-  
ւում: Իսկ նրա մե-  
ծամեծ գործերի  
Հոչակը աշխարհի  
ամեն անկիւնն անցել է: Լսվում էր,  
որ նա անհուն տոկոճնութեամբ տա-  
նում էր պարանոցին կախած խաչը,  
որ բոլորովին չէր գժուարանում ա-

մեն անձուկ ուղիներն անցնել, որ  
անգաղար սլանում էր քաղաքից  
քաղաք, գիւղից գիւղ, ամենուրեք  
մխիթարում, սիրտում: Լսվում էր,  
որ արեմնուտք է գնացել, այս և այն  
եկեղեցիներն է անցել, այս և այն  
դռներն է բաղխում և ամենուրեք իւր  
հարազատ թշուառականների սրտե-  
րի գանգատներին թարգման հան-  
գիստանում, մերթ գոչում, մերթ ա-  
զաղակում, մերթ ինդրում, մերթ  
հրամայում, որ օգնութեան ձեռք  
մեկնեն, որ վիրաւորուածին դեղ,  
դարման հասցնեն և այդպիսով նա  
վայելել է ընդհանուրի սէրն ու հա-  
մակրանքը, որ ամենքն էլ նրան ըն-  
դունում են իբրև հարազատ, ցա-  
ւակից հայր, և որ ամենքն էլ իրանց  
ուրախութիւններն ու տրամոլութիւն-

ները բաժանում են նորա հետ և նա իւր սիրտը կենդրոնացրել է բոլորի սրտերի մէջ:

Այս բոլորը լսում էր Սրբուհին, սիրտը բերկրութեամբ զեղվում, օրհնում էր Աստրծուն և միշտ կըրկնում՝ «արդեօք իմ յոյսերը պսակուած կըտեսնե՞մ»:

Նրան կրկին տեսնել կարօտում էր Սրբուհին, նրա հետ կարօտում էին և անթիւ հաղարներ: Կրկին տեսնել, պարանոցին կախած խաչի հետ, այն ժամանակ արևառ ճակատը արևաշող պսակով հիւսել, նրա հետ և միլիօնաւոր տենչանքներ ու յոյսեր պսակել:

Եւ տարիները որքան անցնում էին, Սրբուհին աւելի մաշվում էր:

Նա լացով, արցունքով սպասում էր Արծուին:



Նա լացով, արցունքով սպասում էր Արծուին:

Անցան ամբողջ երկու տասնեակ տարիներ, այն օրից երբ նա ուխտ կապեց Արծուի հետ, բայց նրան տա-



կաւին չէ տեսնում, իսկ հոչակի ծաւալը երկրի ամեն անկիւնն էլ հասել է և Սրբուհին ամեն տեղից լսում է այն մեծամեծ գրուատումները, որ թափում էին Սրճոււի սխրալի գործերի վերաբերմամբ:

Այդ երջանիկ օրուանից սկսած երրորդ տասնամեակը լրանալու վերայ էր:

Սրբուհու ապարանքը շրջապատել էին բազմաթիւ բուեր, որոնք ջանում էին թէ նրա սէրը գրաւել և թէ այն հոյակապ ապարանքին տիրանալ:

Եւ նա գոչում էր. «Այն խաչը, այն խաչը ես նորից տեսնեմ և ապա հանգստանամ, փարուիմ այն պարանոցով, որով կախեցի նրան. Տէր Աստուած, Քեզ եմ ապաւինած, դէպ



— կամ գլխի կտրուածը շրջապատում էր բուեր: —

Քեզ դարձրած իմ յոյները, հովանաւորիր Աջդ, զերծ պահիր իմ ապարանքը ըմբոստների թափած կեղտերից, հասցրու իմ Արծուին» :

Սև հագուստ էր հագել նա, սև շղարշով ծածկել իւր ապարանքը: Նայում էր վեթիարի Մասիսին, այլ պարզ ճակատն ու ալեզարդ գլուխը չէր տեսնում, մէզն ու մնայլ մանախուղը ծածկել էին նրան և անհետացրել մարդկանց աչքից:

Եւ միշտ գոչում էր Սրբուհին. «եկ, իմ թանկագին Արծիւ, շտապի՛ր շուտ» :

«Շտապի՛ր շո՛ւտ», արձագանք է տալիս Մասիսը:

IV.



րեք տանամեակն էլ լրացաւ. Թէ ինքը և թէ իւր ամբողջ ապարանքը կատարեալ տագնապի մէջ էին: Պատած էին ամէ՛հի հրոսակներով:

Բայց մի փառաւոր օր, ամպրոպի ձայնով գողաց Մասիսը, արձագանք տուաւ բիւրաւոր սրտերից բղձած



«կեցցէ»ներին, գլխից վերքրեց մէզն ու մառախուղը, աշխարհը ցնծութեամբ զեղուեց և ամենուրեք տարածուեց Արծուի գալու լուրը:

Լսեց Սրբուհին, ուրախացաւ, սև շղարշը վերքրեց պարանքից, ծիրանի հագաւ և սպասեց իւր սիրեցեալ փեսային:

Խաւարը, թանձր խաւարը պատեց ըմբոստներին, ուրախութիւնը համակեց ամբողջ աշխարհին, գերիների ոտքերի շղթաները կոտորուեցան, և համասփիւռ բերկրութեամբ ձիթենիներով ու արմաւենիներով դիմաւորեցին բոլորն էլ պահապան Արծուին:

Եկաւ նա, որ իւր ամբողջ կեանքը զոհեց ամենքի համար և գթառատ սրտով ձիգ թափեց ամենքի

վիճակը բարւոքելու, եկաւ նա, որ ունայն փառքը խորտակեց, պատիր շաղփաղփանքներն արհամարհեց և միշտ հոգաց թշուառների ու կարօտեալների պակասը լրացնելու, եկաւ նա, որ ամենքի համար հայր էր, հայր, բառիս բովանդակ նշանակութեամբ, որին և միաբերան գոչում են «հայրիկ»:

Եկաւ Սրբուհու սիրեցեալը, եկաւ առնելու այն պսակը, որ իւր ապարանքի կամարներից երկնային հրեշտակները կախել էին դէպի նա:

Սառնասիրտ բնութիւնը այս դէպքում կարծես միացաւ ընդհանուրի հետ և սկսեց ինքը ևս հրձուել այդ մեծ մարդու փառքով: Ուր էլ նա անցնում էր, խոնարհութիւն ու հնազանդութիւն էին յայտնում նրան:

Ծառերն անոյշ շրջիւնով, ծաղիկները հեզիկ երերմունքով, առուններն ու վտակները սրտառուչ կարկաչով, հովերն ու զեփիւռները վէտ վէտ վզզալով նրան էին բարւում, նրան սիրոյ ողջոյններ թափում:

Եկաւ Արծիւը, սլացաւ գէպի Սըբուհին, ընկաւ նրա խանդավառ գիրկը:—Օ՛, ի՞նչ փայփայանք, ի՞նչ փաղաքշանք:

—Իսկ այն խաճը. ո՞ւր է, գոչեց Սըբուհին, յանկարծ խաչը նրա կրծքին չտեսնելով:

—Հալուեց այն խաչը, պաշտելիդ իմ Սըբուհի: Ես նրա փոխարէնը ստացայ լոկ մի անուն:

—Լոկ մի անուն:

—Այո՛:

—Կարողացա՞ր դու տանել այն ծանր խաչը:

—Այո:

—Հալեցնե՞լ իսկ:

—Այո՛:

—Եւ մինչև անգամ փոխարէնը անուն վաստակե՞լ:

—Այո՛:

—Ի՞նչ անուն:

—Հայրիկ:


—Հայրիկ, գոչեց Սըբուհին զարմացած և ապշած:


—Կրիր այսուհետև այդ խաչը ևս. ասաց և մի այլ աւելի ծանր նաչ կախեց նրա պարանոցով. մի համբոյր դրոշմեց նրա ճակատին և գոչեց. «Կեցցէ՛ հայրիկը»:

«Կեցցէ՛ հայրիկը», գոռաց Մասիսը:



«Կեցցէ Հայրիկը», թնդաց ամ-  
բողջ աշխարհը:







Սրբուհի Գրիգ Է . . . 30 Է.  
Արծուի Դատաստանը Գ. 40 »

---

ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ՝

Թիֆլիզ՝ Կենտրոնական գրավաճառա-  
նոցում:

Մոսկուա՝ պ. Մ. Բարխուդարեանի  
ուպարանում:

Նոր-Նախիջևան՝ պ. Կարապետ Թիմ-  
րեանի մօտ:

---

Սոյն գրքերի վերաբերեալ որ և է  
զորո՞մ ունեցողները պէտք է ղիմեն Նոր-  
Նախիջևան պ. Կարապետ Թիմրեանին  
այս հասցեով. Нахичевань на-Дону,  
Директору Общества Взаимнаго  
Кредита Карпу Владимировичу  
Тимрову.

ՀՀ Ազգային գրադարան



NL0585752



